

ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԵՐԸ (Նիւթեր հայոց մելիքութիւնների մասին)

(Ժար. «Բազմավէպ» 163 [2005] էջ 153-193)

ԳԼՈՒԽ Զ

ԽԱԶԵՆ ԳԱԻԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՀԱՍՏԱՆ-ԶԱԼԱԼԵԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԸ ԺԷ-ԺԹ. ԴԱՐԵՐՈՒՄ

Խաչէն գաւառի մելիքութեան տարածքը սկսւում էր Խաչէնագետից եւ տարածւում մինչեւ Կարկառ գետը: Խաչէն գաւառի տիրակալները Առանշահիկ հնագոյն իշխանական տոհմից սերուած Հասան-Զալալեաններն էին: Այս տոհմի հիմնադիրը Առանշահիկների իշխանութեան Ներքին Խաչէնի ճիւղի ժառանգորդ Հասան-Զալալ Դոլան (?-1261) էր, իր իսկ խօսքերով ասած՝ «բնակաւոր ինքնակալ քարար եւ մեծ Արցախական աշխարհի»¹: «Հասան-Զալալ իշխանի անունից էլ Հասան-Զալալեանի կոչուած իշխանական տունը, որ տէրն էր Ներքին Խաչէնի, դարձաւ միջնադարեան Հայաստանի վարչական ամենանշանաւոր միաւորներից մէկը: Այն դիմացաւ քարար-մոնղոլների ու Օրանց հետքերով եկած ակ-կոյունլու եւ կարա-կոյունլու քուրքերի հարուածներին, ապա հայրենի Խաչէնում կազմաւորուած մելիքական տների վերափոխուելով, գոյատեւեց մինչեւ ԺԹ. սկիզբը»²: Հասան-Զալալեանների իշխանանիստ ամրոցներն էին Թարխանաբերերը (Խոխանաբերդ) եւ Կաչաղակա-

1 ՇԱՀՆԱՅԻՆ ՆԵՐԸ Յ., Սառրագրութիւն կաքուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատյ, 4. Բ, էջմիածին, 1842, էջ 371, ԶԱԼԱԼԵԱՆՑ Ս, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, 4. Ա, Տփիս, 1842, էջ 183, ԲԱՐԽՈՒՏՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից կրկիր և դրացիք: Արցախ, Երեւան, 1999, էջ 250, ՈՒՂՈՒԲԱԲԵԱՆ Բ., Գանձասար, Երեւան, 1981, էջ 87, Դիւան Հայ վիմագրութեան, V, Արցախ, Երեւան, 1982, էջ 38:

2 ՈՒՂՈՒԲԱԲԵԱՆ Բ., Խաչէնի իշխանութիւնը Ժ-ԺԹ. դարերում, Երեւան, 1975, էջ 86:

բերդը³: Այս տոհմի ներկայացուցիչները ժԴՊ. վերջից ժառանգաբար տիրել են նաև Աղուանից (Գանձասարի) կաթողիկոսական գահին, իսկ կաթողիկոսանիստ Գանձասարը վերածուել է Արցախի մելիքութիւնների հոգեւոր եւ քաղաքական կենտրոնի:

Հասան-Ջալալեանների տոհմաբանութեան ուսումնասիրութեանը առաջինը ձեռնամուխ են եղել այս տան ներկայացուցիչները՝ եսայի Հասան-Ջալալեանը⁴, Բաղդասար Հասան-Ջալալեանը եւ Սարգիս Ջալալեանը⁵: Այդ աշխատանքների շարքում լաւագոյնը պէտք է համարել Բաղդասար Հասան-Ջալալեանի 1849-ին կազմած «Ազգաբանութիւն եւ ծննդաբանութիւն ազգին Հասան-Ջալալեանց» տոհմացանկը, որի տարբերակներից մէկը հրատարակել է Բաֆֆին⁶: Առհասարակ, ըստ Խաչիկ վրդ. Դադեանի

³ Այս բերդի մասին տե՛ս ՍԱՐԳՍԵԱՆ Ս., Կաչաղակարերդ, «ՀՀԳ», 1990, թիւ 1, էջ 41-48, որտեղ կարդում ենք. «Ամրոցի Կաչաղակարերդ անուանումը կապւում է այն աւանդութեան հետ, թէ անցեալում, պարտութիւն չուսած եւ յամսոն դիմադրութեամբ հոչակուած ամրոցի պաշտպանելերը, երկար ժամանակ ջուր եւ սննդամբերք չունենալով, նահատակում են, բայց չեն յանձնուում թշնամուն: Իսկ երբ կաչաղակներն ու միւս գիշատիչ բոչունները սկսում են աղմուկ-աղաղակով պտոյտներ գործել ամրոցի վրայ, թշնամին կոահում ե, որ պաշտպանելերը կենդանի չեն» (էջ 41):

⁴ Մատենադարան, ձեռ. 7821, էջ 2ա-2բ, ձեռ. 9923, էջ 2ա: Ընդ որում, թիւ 7821 ձեռագիրը, ինչպէս երեւում է յիշատակարանից, բնագրից ընդօրինակել է Բաղդասար Հասան-Ջալալեանը. «Ի ՌՄՇԸ (1809) բուին հայոց ի Սուրբ Արքոս Գանձասարու վերատին նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ ձեռամբ Բաղտասար Վարդապետի Ջալալեան, եւ որդույ Գանձէլ հազարապետին Խաչնեոյ» (էջ 18ա):

Իսկ թիւ 9923 ձեռագիրը արտագրուած է Ս. Էջմիածնի գրագիր Յովհաննէս Ղրիմեցու ձեռքով. «Յամի տեսան 1822 յամսեանն յուլիսի մէկին ընդ սրբազնակատար Նիկոլ կարողիկոսին մինչ էաք ի Գանձասար հրաշալի վանս, տեսի գրազում վանորեկց, եկեղեցեաց եւ խաչից հնագոյն արձանաց օրինակս ժողովեալս ի միում հին տեսուամբ նսայի կարուղիկոսին Աղուանից ի թուականութիւն հայոց ՌՃԿէ (1718), զոր եւ օրինակեցի կրկին իմով ձեռամբ: Խ. ծ. Յոհաննէս եպիսկոպոս երբեմն գրագիր Սրբոյ Էջմիածնի» (էջ 2ա):

⁵ ԶԱԼԱԼԵԱՆՅ Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Տփղիս, 1858, էջ 352-353:

⁶ ՌԱՖՖԻ, Գաղտնիք Ղարաբաղի, Երկերի ժողովածու, հ. 12, Երեւան, 1990, էջ 118-126:

ձեռագրացուցակի, Բաղդասար մետրոպոլիտը կազմել է այս ցանկի երեք տարբերակներ, որոնք «ըստ էռթեան նոյնն են. միայն մանրամասնութեանց մէջ են տարբերաւում. մէկը աւելի համառուտ, միւսը ընդարձակ: Ցանկերի նպատակն է ցոյց տալ, որ մետրոպօլիսի՝ Զալալեանց տոհմը սերւում է հին Աղուանից արքայական տոհմից կամ Խորենացու լեզուով՝ Սիսակից»⁷:

Կարելի է յիշատակել նաև Մ. Բարխուտարեանցի⁸, Դ. Ալիշանի⁹, իսկ ժամանակակից հետազոտողներից՝ Գ. Կիրակոսեանի¹⁰, Ռ. Հիւսնի¹¹ եւ այլոց ուսումնասիրութիւնները, սակայն, կարծում ենք, Խաչէնի իշխանական տան պատմութեանը նուիրուած աշխատութիւնների շարքում իր առանձնայատուկ տեղն ունի Բ. Ուլուբարեանի «Խաչէնի իշխանութիւնը ժ-ժօ. դարերում» մենագրութիւնը, որտեղ հեղինակը հանգամանօրէն ներկայացնում է Հասան-Զալալեանների անցած ուղին, այն հասցելով՝ մինչեւ ժ-ժօ. վերջը: Ուստի, աւելորդ կրկնութիւնից խուսափելու նպատակով, ստորեւ համառօտ շարպըրելու ենք Հասան-Զալալեանների ազգաբանութիւնը՝ սկսած ժէ դ. սկզբից մինչեւ ժ-ժօ: Ակիրը:

Ժ-ժօ. վերջում եւ ժէ-ի սկզբին Խաչէն գաւառի տիրական էր Մեհրաբէկի աւագ որդի Զալալ Գ-ը: Մանր ու դժուարին ժամանակներ էին: Հայոց հողը դողում էր թուրք-պարսկական պատերազմներից, որոնց ալիքները հասել էին նաեւ Արցախ: Այդ անցքերի մասին պատմող նիւթերից է նաեւ Հասան-Զալալեանների տոհմական սեփականութիւնը հանդիսացող Աւետարանում Զալալ Գ-ի թողած յիշատակարանը գրուած Աւետարանը գերութիւնից հետ վերադարձնելու առթիւ: Այս յիշատակարանը մեզ համար կարեւոր է նաեւ իր հաղորդած անուններով: «Արդ, ըստացայ սուրբ Աւետարանս ի գերութեան ես՝ Ճալալ, որդի մեծին Մեհ-

⁷ Թօֆձեւսն Յ., Ցուցակ ժողովածուաց Խ. Վրդ. Դադեանի, Հ. Բ, Վաղարշապատ, 1900, էջ 37: Այժմ այդ տոհմացանկերը պահւում են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ), Փ. 57, ց. 3, գ. 9, էջ 16-26:

⁸ ԲԱՐԻՆՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Պատմութիւն Աղուանից, Հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 141-173, Հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 33-36:

⁹ ԱԼԻՇԱՆ Դ., Արցախ, Երեւան, 1993, էջ 64-67:

¹⁰ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Գ., Հասան-Զալալեան իշխանական տունը ժն. դարում, «ՀՀԳ», 1969, թիւ 5, էջ 86-94:

¹¹ HEWSEN R., The Meliks of Eastern Armenia, «Revue des Etudes Arméniennes», 1972, IX, p. 317-318, 1973-1974, X, p. 288-289, ներդիրը:

բապ պէկին, եւ որդոց իմոց Պայինդորին, եւ դէսդերաց Կիշի-խանին եւ Սալվարին եւ ամենայն յարեան մերձաւորաց իմոց եւ յիշատակ ծնաւղաց իմոց: Առայ սուրբ Աւետարանս ի հալալ ինչից իմոց ի դառն եւ ի նեղ ժամանակս, որ դիմեցաւ աւամանուն ի տեղիս, որ կոչի Խաչէն, թագաւորութեան մնջին Ճալալին եւ կաթուղէկոսութեան տեղիս տէր Սիմալոնին, ի սուրբ ուխտիս Գանձայսարայ... ի թվիս Հայոց ՌԼԸ (1589) էր»¹²:

Այնուհետեւ, ըստ Առաքել Դաւրիժեցու՝ 1603թ. իրենց օսմանեան բոնապետութիւնից փրկելու խնդրանքով իրանի Շահ-Աքբաս Ա-ի (1587-1629) մօտ գնացած Հայ իշխանաւորների մէջ էր նաեւ «Զալալ թէկն իւր եղոր որդուն ի Խաչենայ»¹³: Սակայն յոյսերը չարդարացան. մի բոնակալին փոխարինեց միւսը, իսկ 1604-ի աշնանը թուական գերակշռութիւն ստացած թուրքական զօրքից պարսկական բանակի նահանջն ուղեկցուեց Հայերի սոսկալի բոնապաղթով, որն ահասարսուռ գոյներով են ներ՝ կայացնում ոչ միայն Հայ, այլև օտարերկրացի ականատեսները:

Այդ խորապատկերում է գրուել Զալալ Գ-ի յաջորդ յիշատակարանը, որտեղ, սակայն, ոչ մի խօսք չկայ ո՛չ Շահ-Աքբասի գալու հետ կապուած ակնկալիքների, եւ ո՛չ էլ նրա գալուն հետեւած հիասթափութիւնների մասին: Ահաւասիկ այդ յիշատակարանը. «Վերջին ստացալ զար աւետարանիս պարոն Ճալալ թէկս որդի Մըհրապ թէկին, որ ստացաւ զար աւետարանս ի հալալ ինչից իւրոց եւ արդար վաստակոց. ի յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց. հաւրն Մըհրապ թէկին. եւ մաւրն իւրոյ Շահում աղին. եւ հանգուցեալ եղբայրցն իմոց պարոն Պաղտասար թէկին, Յոհաննես կաթողիկոսին, Գրիգոր կաթողիկոսին, Դաւիթ կաթողիկոսին, որ է որդի պարոն Պաղտասար թէկին. եւ հանգուցեալ որդոցն Պայալդուր թէկին, Մըհրապ թէկին: եւ կենդանի որդին [Վէ]լինան թէկն: եւ կենակցին իմոյ պարոն Բէկում աղին: եւ դստերացն իմոյ Սալվացին իմոյ պարոն Արդ գըրին, Գիշիխանին, Մահփարին, Խանում աղին. ամէն: Արդ գըրին,

¹² Մատենադարան, ձեռ. 378, էջ 7ա, նաեւ՝ Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, Երեւան, 2004, էջ 310.

¹³ ԱՌԱՔԵԼ ԴԱՒԻՐԻԺԵՑԻ, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 16.

¹⁴ ANTHOINE DE GOUVEA, Relation des grandes guerres et victoires obtenues par le roi de Perse Cha Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Achmet son fils, Rouen, 1646, p. 341-363, թարգմանութիւնը տե՛ս «Լումայ», Տիկիս, 1899, Ա, էջ 204-219.

բեցաւ ի թվարերութիւնս հայոց ՌԾԵ (1606)»¹⁵: Դժուար չէ նկատել, որ այս յիշատակարանը աւելի լիարժէք տեղեկութիւններ է տալիս Զալալ իշխանի ընտանիքի մասին, քան նախորդը:

Հետաքրքիր է տեսնել, թէ ինչպէս է ներկայացրել Հասան-Զալալեանների տոհմաշղթայի այս օղակը Բաղդասար մետրոպոլիտը. «Զալալ-թէկ Գ որդի Մեհրապ-թէկին՝ ծնանի զՎէլիշան-թէկ Բ եւ զԱղաքէկ»¹⁶: Յիշխատակարանների հետ համեմատելիս, ակնյայտ է դառնում, որ Զալալ Գ-ը Աղաբէկ անունով որդի չի ունեցել, եւ այս դէպքում սխալում է Բաղդասար մետրոպոլիտը, ինչպէս նաեւ այս հարցում նրան հետեւող ուսումնասիրողները, իսկ ճշգրիտը Մեսրոպ եպիսկոպոսն է, որն իր հրատարակած յիշատակարանի տուեանների հիման վրայ գրում է. «Պարոն Ճալալն ունեցել է երեք որդի, որոնցից երկուսը մեռած (այսինքըն՝ Պայանդուր բէկը եւ Մեհրաբ բէկ-Ա. Մ.), կենդանի է (Վ.Ե.)ինան բէկը»¹⁸:

Վելիշան-թէկի մասին վկայութիւններ չեն պահպանուել: Յայտնի է միայն, որ «Վէլիշան-թէկ Բ՝ որդի Զալալ-թէկին Գ, ծնանի զԳրիգոր Բ կաթողիկոս և զԲաղդասար-թէկ Բ»¹⁹: Արցախի վիմագրական ժառանգութեանը քաջածանօթ Մ. Բարխուտ-տարեանցը գրում է. «Վէլիշան-թէկ Բ-ի և Բաղդասար-թէկի մասին ոչ ինչ արձանագրութիւն չկայ մեջ տեղ»²⁰: Անհամեմատ շատ են Աղուանից Գրիգոր Բ. կաթողիկոսի մասին եղած տեղեկութիւնները: Պահպանուել է ինչպէս շահ Սեֆիր (1629-1642) 1634թ. գեկտեմբերի 31-ի հրովարտակը՝ Գանձասարի կաթողիկոսութիւնը Գրիգոր Հայան-Զալալեանին յանձնելու մասին²¹, այնպէս էլ Շահ Աբրաս Բ-ի (1642-1666) 1652թ. հրովարտակը, որով

¹⁵ Մատենագարան, ձեռ. 5794, էջ 207ա, նաեւ՝ ՄԵՄՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Զաքարիա Անդրէսի ձեռագիրը և Դաւիթ թէկի մասին յիշխատակարան, «Բանբէր Հայաստանի գիտ. ինստիտուտի», գիրք Ա-Բ, 1921-1922, էջ 132-133:

¹⁶ ՐԱՅԹԻ, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 124, ՀԱԱ, թ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

¹⁷ ՏԵ՛ս, օրինակ, HEWSEN R., The Meliks of Eastern Armenia, §REArm 1st X, ներդիրը:

¹⁸ ՄԵՄՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ, նշ. աշխ., էջ 133:

¹⁹ ՐԱՅԹԻ, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 124, ՀԱԱ, թ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

²⁰ ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 34:

²¹ Մատենագարանի պարսկերէն վաւերագրերը. Հրովարտակներ, պրակ II, կազմ Յ. Փափագեանը, Երեւան, 1959, էջ 110, ուսւերէն պատճէնը տե՛ս Մատենագարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 241, վաւ. 200:

վերահաստատուել են նրա կաթողիկոսական իրաւունքները: «Գրիգոր կաթողիկոսը գալով Երկնային գահի բարձրութեանը հասնող արքայական պալատ, -կարդում ենք վերջին հրովարտակում, -խնդրեց Մեր արքայական Մեծութեան ստորագրութեամբ վերահաստատել կաթողիկոսութիւնը [իր անունով]: Աւարեցէի ու թովշիկի դափթարի հիման վրայ հաստատեցին այդ իրողութեան անփոփոխ լինելը: Ուստի ազնուագոյն քրիստոնեայ Գրիգոր կաթողիկոսի հանդեպ ունեցած մեր շահական ողորմածութեամբ, ըստ կարգի, այդ դիրքը երան շնորհեցինք»²²: Գրիգոր կաթողիկոսը վախճանուել է 1653 թուականին:

Նրան յաջորդել է Հասան-Ղալաբեանների տան ողբերից Պետրոս Խանձրեցին²³, որը Գանձասարի կաթողիկոս է եղել 1653-1675թթ.:

իսկ «Բաղդասար-բէկ Բ. որդի Վելիչան-բէկին Բ-ի եւ քռն Զալալ-բէկին Գ-ի՝ ծնանի զԵրեմիայ կաթողիկոս, զԱրիստակւ եպիսկոպոս, զՎելիչան-բէկ Գ. եւ զՄուլֆի-բէկ»²⁴: Բաղդասար մԵտրոպոլիտի տոհմացանկի միւս տարբերակում կարդում ենք. «Երեմիայ կաթողիկոսն Փէրման է ստացեալ 1086 ամին տաճկաց (1675/76) յերկրորդ շահ Սեֆի պարսից արքայէն վասն հենութեան եւ հաստատութեանն իւրեանց»²⁵: Շահ-Սուլէյմանի 1086 հ. թ. սաֆար ամսի (1675թ. ապրիլի 27-մայիսի 26) հրովարտակը, որով Երեմիա Հասան-Զալալեանին հաստա-

²² Նոյն տեղում, պրակ I, Կազմեց Ք. Կոստիկեանը, Երեւան, 2005, էջ 28, ոռութիւն պատճեններ տես' նոյն տեղում, թղթ. 241, վա. 200:

²³ ՄԿՐՏՉԻՄԵԱՆ Լ., Գանձասարի կաբուլիկոսութիւնը Պետրոս Խանճեցի կաբուլիկոսի օրոք, «ՀՀԳ», 2000, թիւ 1, էջ 90:

24 ՈՍՖՖԻ, Երկերի ժողովածու, 4. 12, էջ 124, Հմմտ. ՀԱԱ, ֆ. 57, գ. 3, գ. 9,
թ. 18, որտեղ բացակայում է Արխատակէս եպիսկոպոսի անունը: Այն, որ նը-
րանք իրօք ունեցել են Արխատակէս անունով եղբայր, հաստատում է վեր-
ջինիս տապահնագրով: «Այս է տապահ Արխատակէս եպիսկոպոսին, որ եր Կո-
րայր Երևանիա կարուղիկոսին ՌՃՂ.Գ (1684) քվին» (ԲԱՐՄԽՆԻՏԱՐԵՆԱՅ Մ.,
Աղուանից Երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 253, Դիւան, V, Արցախ, էջ 68):
25

ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18: Այս շահ Սեփին նոյն ինքը շահ Սուլէյման (1666-1694) է. ժամանակակից Զաքարիա Ազուլեցին նրա առուանափոխութեան մասին գրում է, որ 1666թ. «հնտեսմբերի մէկումն ըստաղակ եկաւ ամէն երկիր, թէ Շահարա մեռա, տէղի հաստա իր մեծ որդի Շահ-Ալփի թագաւորին անունն փոխեցին, որին Շահ-Ալէման» (ԶԱ.ՔԱ.ՄԻԱ.Ա.ԳՈՒԼԵՑԻ, Օրագրութիւն, Երեւան, 1938, էջ 68):

տել է Գանձասարի կաթողիկոսական գահին, կարեւոր է նաեւ այն առումով, որ պարունակում է տեղեկութիւններ նրան նախորդած կաթողիկոսների մասին։ Հրովարտակում մասնաւորապէս կարդում ենք. «Խաչէնի հոգեւոր առաջնորդ Երեմիան տեղեկացրեց, որ Ղարաբաղի ու միւս [շրջանների] հայերի կաթողիկոսի ու [հոգեւոր] առաջնորդի դիրքը պարտադիր ուաղամների հիման վրայ, հնուց ի վեր ժառանգաբար փոխանցուելով, երա հօրեղբայր Գրիգոր կաթողիկոսին էր անցել, բայց իր եւ միւս ժառանգների մանկահասակ լինելու պատճառով յանձնուել էր երա [Գրիգորի] աշակերտ Պետրոս կաթողիկոսին։ Վերոյիշեալ Պետրոս կաթողիկոսը մահացել է, սակայն իր կենդանութեան օրօֆ վերը նշուած Երեմիային է իր յաջորդ նշանակել ու գրութիւն բողել, որպէսզի իր մահից յետոյ նա ստանձնի վերոյիշեալ շրջանների հոգեւոր առաջնորդի ու կաթողիկոսի դիրքը... Ուստի նապաստակի տարուայ սկզբից Գանձակ-Ղարաբաղի ու Շիրվան-Շամախու հայերի կաթողիկոսութիւնը յիշեալ Երեմիա կաթողիկոսին շնորհեցինք»²⁶։ Յետագայում՝ շահ Սուլէյմանի մահից յետոյ, իրանի նոր շահ Սուլթան Հուսէյնը (1694-1722) իր 1111 հ. թ. ուաջար ամսի (1699թ. դեկտ. 23-1700թ. յունուարի 22) հրովարտակով վերահստատել է նրա կաթողիկոսական իրաւունքները, որովհետեւ «Երեմիա կաթողիկոսը տեղեկացրեց, որ այդ մահալների հայերի կաթողիկոսութիւնը, ինչպէս որ իր նախնիների վերաբերութեամբ էր այդ արուել, այնպէս էլ դրախտաբնակ արքայի (շահ Սուլէյմանի-Ա.Մ.) իրամանագրով իրեն է շնորհուել, որը սակայն Մեր արքայական բարերախտ Մեծութեան ստորագրութեամբ չէր հաստատուել»²⁷։ Երեմիա կաթողիկոսը վախճանուել է 1700թ., ինչպէս վկայում է նրա տապանագիրը.

«Այս տապան Երեմիա կաթողիկոսին Աղուանից, որ է յազգեն Զալալ Դոլին ՌՃԽԹ (1700)»²⁸:

Հստ Բաղդասար մետրոպոլիտի՝ Երեմիա կաթողիկոսի եղբայր Վելիջան-բէկ Գ-ը թողել է երկու որդի՝ Եսայի եւ Յովհան-

²⁶ Մատենագարանի պարսկերէն վաւերագրելը, պրակ III, էջ 103-104, ռուսերէն պատճէնը տէ՛ս Մատենագարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 241, վաւ. 201:

²⁷ Նոյն տեղում, էջ 142:

²⁸ ԲԱՐԻՆՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 252, Դիւան, V, Արցախ, էջ 65:

նէս²⁹: Սակայն, Գանձասարի վանքի մօտ գտնուող գերեզմանատանը կայ մի տապանաքար, որը թոյլ է տալիս մի լրացում կատարելու Բաղդասար մետրոպոլիտի տոհմացանկում.

«Այս է հանգիստ Վելիջանի որդի Այտինին, որ է եղբայր Եսայի կաթողիկոսին: թիւն ՌՃՀ (1721) էր»³⁰:

Մրանից ելնելով՝ վստահ կարող ենք ասել, որ Այդինը Վելիջան-բէկի երրորդ որդին էր: Թէեւ մեծանուն Բաֆֆին գրում է, որ Վելիջան-բէկը վախճանուել է 1686թ.³¹, սակայն այս դէպքում նա սխալում է: Իրականում Վելիջան-բէկը մահացել է 1688թ., ինչպէս ապացուցւում է նրա տապանագրով.

«Այս է տապան Բաղդասարի որդի Վելիջանին՝ եղբօր Երեմիա կաթողիկոսին:
ի ՌՃՀ (1688) թուին»³²:

Նրա աւագ որդին՝ Գանձասարի կաթողիկոս, պատմիչ եւ ազգային-ազատագրական շարժման գործիչ Եսայի Հասան-Զալայինը «Յ ֆերման է ստացեալ շահ Սօլթան Հուսէյին պարսից արքայէն. Երկուսն ի 1111 ամին տանկաց եւ մինն ի 1113 ամին տանկաց, վասն հեռութեան եւ հաստատութեանն ազգին իւրոյ եւ իւր իսկ»³³: Այդ հրովարտակներից մէկը շահ Սուլթան Հուսէյինի 1111 հ.թ. շաւալ ամսի (1700թ. մարտի 22-ապրիլի 20) հրամանագիրն է, որով յանձնարարում է Շիրվանի, Կախեթի ու Ղարաբաղի տեղական իշխանութիւններին օգնութիւն ցուցաբերել Աղուանից կաթողիկոսութեանը ենթակայ Շիրվանի հայերից եկեղեցական հարկերը հաւաքելու գործում՝ տրուած Երեմիա կաթողիկոսի եղօրորդի Եսայի վարդապետի ինդրագրի հիման վրայ՝³⁴: Այս հրովարտակից կարելի է եղրակացնել:

ա) Երեմիա կաթողիկոսն հաւանաբար արդէն վախճանուած էր, այլապէս որպէս խնդրագրի հեղինակ Եսային հանդէս չէր գայ:

29 ՐԱՖԹԻ, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 125, ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

30 ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ Բ., Գանձասար, էջ 162:

31 ՐԱՖԹԻ, Երկերի ժողովածու, հ. 9, Երեւան, 1987, էջ 427: Հաւանաբար, Բաֆֆու սխալը բխում է Վելիջան-բէկի տապանագրի սխալ ընթերցումից՝ «ՌՃՀ»-ի (1688) փոխարէն «ՌՃՀ» (1686):

32 ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ Բ., Գանձասար, էջ 163:

33 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

34 Մատենադարանի պարսկերէն վաւելագրերը, պրակ III, էջ 146-147:

բ) Եսային, թէեւ իրականացնում էր կաթողիկոսական գործառոյթներ, սակայն դեռեւս շահի կողմից որպէս կաթողիկոս չէր հաստատուել:

Իրօք, Եսայու կաթողիկոսական իրաւունքները հաստատուել են շահ Սուլթան Հուսէյնի 11134. թ. ջումաղի առաջին ամսի (1701թ. հոկտեմբերի 4-նոյեմբերի 3) հրովարտակով³⁵: Եսայի կաթողիկոսը վախճանուել է 1728 թուականին:

Երեմիա կաթողիկոսի կրտսեր եղբայր Մուլքի բէկը ունեցել է երկու որդի՝ Մելիք-Գրիգոր եւ Մելիք-Ալլահվերդի: Մուլքի բէկը վախճանուել է 1716թ. «ի ժամանակս մահդարայժամկան», ինչպէս վկայում է Գանձասարի վանքին կից տարածուած հանգստարանում գտնուող նրա շիրմաքարի արձանագրութիւնը.

«Այս է հանգիստ Մուլքիակի, որ է որդի պարոն Պաղտայսարին, որ է եղբար Երևմիեա կաթողիկոսին, որ է հայր Մէլիք Գրիգորին: ՌՃԿԸ (1716): ի վեցին ի ժամանակս մահդարայ-ժամին սայ փոխեաց ի Ռ ՏՐ կենդանին: Ազգին Զալալ Դոլին»³⁶:

Նրա որդիները յաջորդաբար «հրովարտակօֆ եւ ֆէրմանօֆ յօմանցւոց տէրութեանն եւ նադիր շահ պարսից արքայէն ի 1126 (1714), ի 1131 (1718/19), ի 1141 (1728/29), ի 1148 (1735/36) ամին տանկաց, տիրապետեցին իշխանութեամբ ի վերայ Խաչենյ գաւառին բնակիչ ժողովրդոց»³⁷: Փաստաթղթերը վկայում են, որ 1714-1728թթ. Խաչէնի մելիքը Գրիգորն էր: Նրա անուանը քանից հանդիպում ենք 1723-1728թթ. Արցախի մելիքների եւ ոռոսց արքունիքի գրագրութիւններում³⁸, որոնցից մէկում կարդում ենք. «Գրիգորն եւս է իշխանաց ցեղէ»³⁹: Այնուհետեւ, «Մէլիք-Գրիգորն զիւր մելիքական իշխանութիւնն եւտ իւր եղօր Մէլիք-Ալլահվերդոյն ի վերայ Խաչենյ գաւա-

³⁵ Նոյն տեղում, էջ 149-152:

³⁶ ՈՒՂՈՒԲԱԲԵԱՆ Բ., Գանձասար, էջ 161-162:

³⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

³⁸ Էզօվ Գ., Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, с. 345, 356, 382, 442, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, Ереван, 1967, с. 27, 92, 188, 200, 287.

³⁹ Էզօվ Գ., սկ. соч., с. 345, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 27.

ոին, եւ ինքն հրաժարեցաւ յիւր մարմնաւոր իշխանութիւնն եւ օծաւ վարդապետ եւ եղիս առաջնորդ Սրբոյ վանիցն Գանձասարու ի ժամանակս տիրապետութեանց օսմանցոց եւ նադիր շահ պարսից արքային»⁴⁰: Գրիգորը վախճանուել է 1748թ., ինչպէս երեւում է նրա տապանագրից:

«Այս է տապան Գրիգոր վարդապետին,
որ է ազգէն Զալալ Դոլին թվ. ՌՃՂէ (1748)»⁴¹:

Մելիք-Ալլահվերդու մելիքական իշխանութիւնը 1729թ. յունուարին հաստատուել է Արցախը նուաճած օսմանեան Մուսթաֆա փաշայի հրամանով՝⁴²: Մելիք-Ալլահվերդին դաւագրաբար սպանուել է 1755-ին, Վարանդայի Մելիք-Շահնազարի թողտուութեամբ Արցախ ներթափանցած Փանահ խանի ձեռքով: Դրանով անդառնալի հարուած էր հասցւում Հասան-Զալալեանների աշխարհիկ իշխանութեանը:

Այնուհետեւ «ի յայտ է գալիս ոմն Մելիք Միրզախան Խնձիրստան (Խնզրստան) գիւղից, որը վերոյիշեալ խանին մատուցած ծառայութիւնների (Մելիք-Ալլահվերդուն դաւելու-Ա.Մ.) ու նուիրուածութեան համար մելիք է դառնում»⁴³: Խօսքը Փանահ խանի դրածոյ Մելիք-Միրզախանեան Մելիք-Միրզախանի (մահ. 1777)⁴⁴ մասին է, որը քիչ վնասներ չպատճառեց Արցախի հայրենանուելը մելիքներին:

Իսկ Մելիք-Ալլահվերդի Հասան-Զալալեանը թողել է երկու որդի՝ Եսայի Եպիսկոպոս եւ Մելիք-բէկ Ա.: Մատենադարանում պահւում է Փանահ խանի 1754 թ. հրովարտակը, որով Մելիք-բէկը նշանակուել է Խաչէնի վեքիլ՝⁴⁵, այսինքն՝ լիազօր կառավա-

⁴⁰ ՐԱՖՖԻ, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 124:

⁴¹ ԲԱՐԻՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 253, Դիւան, V, Արցախ, էջ 68:

⁴² Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2թ, վաւ. 169, պատճէն:

⁴³ ՄԻՒԶԱ. ԵՈՒ-ՍՈՒԹ ՆԵՐՍԷՍՈՎ, Ճշմարտացի պատմութիւն, Երեւան, 2000, էջ 43:

⁴⁴ Մելիք-Միրզախանի մահուան տարեթիւը նշել ենք ըստ նրա տապանագրի (տե՛ս ԲԱՐԻՈՒՏԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 243, Դիւան, V, Արցախ, էջ 142-143): Հաս այդմ, ուղղելի է Պաֆփու նշած 1775 թուականը (տե՛ս ՐԱՖՖԻ, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 468):

⁴⁵ Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 2թ, վաւ. 205, պատճէն:

րիչ: Փանահի որդի Իբրահիմ խանի 1189 և.թ. (1775/76) հրովարտակով⁴⁶ Մելիք-բէկը նշանակուել է նաեւ Խաչն գաւառի զաքիթ⁴⁷, իսկ նոյն խանի մէկ այլ՝ 1778 թ. հրովարտակով Մելիք-բէկի ծերութեան պատճառով Խաչնի վեքիլութիւնը յանձնուել է նրա որդի Գաբրիէլ-բէկին⁴⁸:

Գանձասարից 1784թ. մայիսի 10-ին գեն. Պ. Պոտյոմկինին հանցէագրուած Արցախի երեւելիների նամակում Մելիք-բէկը կրկին անուանում է «Վէքիլ երկրին Խաչէնու»⁴⁹: Դրա միակ բացատրութիւնը կարող է լինել այն, որ Շուշիի խաների կողմից Խաչնի ազգաբնակչութեան վզին փաթաթուած Խնճրիստանի Մելիք-Միրզախանների իշխանութիւնը չէր ճանաչում ոչ Հասան-Զալալեանների, ոչ էլ Արցախի միւս հայրենանուէր մելիքների կողմից:

Մելիք-բէկը թողել է ուժ որդի՝ Յովհաննէս կաթողիկոս, Սարգիս կաթողիկոս, Գաբրիէլ-բէկ, Դանիէլ-բէկ, Միսայէլ-բէկ, Խորայէլ-բէկ, Զալալ-բէկ եւ Ալլահզուլի բէկ: Նրա որդիներից, թերեւա, ամենանշանաւորը Գանձասարի 1763-1786թթ. կաթողիկոս եւ ազգային-ազատագրական շարժման գործիչ Յովհաննէս Հասան-Զալալեանն էր, որը Գանձասարի կաթողիկոս է օծուել էջմիածնում 1765թ. դեկտեմբերի 25-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմէոն Երեւանցու ձեռքով, Աղուանից կաթողիկոսական աթոռին տիրանալու համար հակաթոռ Խորայէլ Զրաբերդցու դէմ մղած եռամեայ աթոռակալական պայքարից յետոյ: Սիմէոն Երեւանցին այդ մասին գրում է. «Սուրբ Խաչը գցելով նրա պարանոցին, կախելով կոնգեռը գոտուց՝ աջ կողմից, տուեցինք գաւազանը (նրա) ձեռքը եւ ասացինք՝ «Պահպանի՛ր», վերըստին տալով կաթողիկոսական իշխանութիւն եւ պատիւ՝ իլուր ամէնքի: Եւ դրանից յետոյ նա Սուրբ պատարագ մատուցեց՝ հայրապետական պատուով»⁵⁰:

⁴⁶ Նոյն տեղում, թղթ. 2թ, վաւ. 227, պատճէն:

⁴⁷ XVII-XVIII դդ. «զաքիթ» էին կոչւում պետական հարկերի վարձակալները, որոնք նախագէս որոշ գումար մուծելով պետական գանձարանը, իրաւունք էին ստանում տուեալ օրեկտի հարկերը գանձելու (տե՛ս Մատենադարանի պարսկէն վաւերագրերը, պրակ III, էջ 191):

⁴⁸ Մատենադարան, Կաթողիկոսական դիւն, թղթ. 2թ, վաւ. 232, պատճէն:

⁴⁹ Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, Ереван, 1990, с. 306.

⁵⁰ ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ, Զամքո, Երեւան, 2003, էջ 125-126:

Յովհաննէս կաթողիկոսը դարձաւ Եսայի Հասան-Զալալեան-Նի գործի արժանաւոր շարունակողը: Նրա նախաձեռնութեամբ են 1780-ական թուականների սկզբին Գանձասարում գումարուել Արցախի մելիքների ու Հոգեւորականների ժողովներ եւ խնդրագրեր յղուել ուստաց արքունիք: Սակայն, ինչպէս վկայում է Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Սարգիս Հասան-Զալալեանը Վրաստանում ուստաց կայսեր լիազօր ներկայացուցիչ Պ. Կովալենսկուն 1800թ. ուղղուած խնդրագրում, «ի թուին 1784-ին նոյեմբեր ամսոյ 5-ին իրեկիմ խորամանկ խանն տեղւոյն, գիտացեալ զայս խորհուրդ, սկսաւ հարցաքննութիւն առնել զթովհաննէս կաթողիկոս եղործս, յիշեալ մելիքանց եւ ուղրաշինն, եւ ապա զպարտաւորութիւն եղ ի վերայ կաթողիկոսին, թէ այս բանս դու ես արարեալ վասն ազգին հայոց, որոյ յաղագաւ մշտապէս մախայր ընդ կաթողիկոսին եւ սպառնայր մահացուցաննել, մինչ զի մահադեղս տալով, երարձ զնա ի կենաց աստի»⁵¹: Իրրահիմ խանի բանտում Յովհաննէս կաթողիկոսի սի սպանութիւնը տեղի է ունեցել 1786թ., ինչպէս վկայում է Գանձասարի վանքի գաւթում գտնուող նրա տապանաքարի արձանագրութիւնը.

«Այս է տապան Յօհաննէս Աղուանից կաթողիկոսին, որ է յազգէն Զալալ Դոլին: թվին ՌՄԼն (1786)-ին»⁵²:

Յովհաննէս կաթողիկոսի սպանութիւնից յետոյ Իրրահիմ խանն իր կնոջ՝ Բիքի խանումի միջնորդութեամբ⁵³, 1787թ. բանտից ազատ է արձակել Յովհաննէսի եղբայր Սարգսին, որին յաջողուել է 1791-ին, խուսափելով իրրահիմ խանի նոր որոդացթից, վախչել Գանձասարից եւ ապաստանել Գանձակի Զաւադ թից, վախչել Գանձասարից յիշեալ Այստեղ էլ «Ճեռնոտութեամբ Զաւատ խանին մօտ»⁵⁴: Այստեղ էլ «Ճեռնոտութեամբ Զաւատ խանին եւ խանի մօտ»:

⁵¹ ՀԱԽՈՒՄԵԱՆ Ա., Նիւթեր ազգային պատմութեան, «Արարատ», 1914, թիւ 7, էջ 375:

⁵² ԲԱՐԻՈՒՏԱՐԵԱՆ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 252, Դիւան, V, Արցախ, էջ 65:

⁵³ Присоединение Восточной Армении к России, т. II, Ереван, 1978, с. 124.

⁵⁴ ՐԱՖՖԻ, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 492:

կոս ի Գանձակ՝ յէլիսավէտապօլ ի քուին ՌՄԽԳ (1794). ի ԺԷ
(17) դեկտեմբերի»⁵⁵:

Սարգիս կաթողիկոսը Գանձակում մնում է մինչեւ 1798թ.,
իսկ այնուհետեւ՝ Արցախում սկսուած սովի եւ ժանտախտի հետևանքով, տեղի ազգաբնակչութեան մի մասի հետ զաղթում է Վշաստան: «Վրաց վերջին թագաւոր Գէօրգին միջնորդեց Ղուկաս կաթողիկոսի մօս, որ Սարգիսը գոնէ Հաղպատի առաջնորդ կարգուի: Ղուկաս զիջաւ այս խնդիրին, ուղարկելով Սարգսին Հաղպատ, բայց լոկ արքեպիսկոպոսական տիտղոսով: Այնուհետեւ, երբ ոռուսները նուանեցին Գանձակի եւ Ղարաբաղի խանութիւնները, Սարգիսը Հաղպատից գնաց Գանձասարի վանքը եւ նորից սկսեց գործածել կաթողիկոսական տիտղոսն ու կնիքը»⁵⁶:

Սարգիս Հասան-Զալալեանի Արցախ վերադառնալուց յետոյ, որպէս Գանձասարի կաթողիկոս, նրա իրաւունքները ճանաչուել են Շուշիի Մեհատի-Ղուլի խանի 1227հ. թ. շաւալ ամսի (1812թ. 10 հոկտեմբեր-օնոյեմբեր) հրովարտակով⁵⁷, որով խանը Արցախում էջմիածնի ազդեցութիւնը թուլացնելու նպատակ էր հետապնդում: Սակայն, «Ներսէս Աշոտակեցին, Յշանակուելով Անդրկովկասի ոռուսահայպատակ հայոց առաջնորդ, իսկոյն ճեռնամուխ նղաւ վերջ տալու Աղուանից իինաւուրց կաթողիկոսութեանը: Նփրեմի եւ ներսէսի այս մասին ունեցած բանակցութիւնները ոռուսաց տէրութեան հետ կատարելապէս յաջողեցան եւ 1815թ. Աղուանից Սարգիս կաթողիկոսը պաշտօնապէս հոչակուեցաւ որպէս միայն արքեպիսկոպոս կամ միտրօպօլիտ Գանձասարի կամ Ղարաբաղի»⁵⁸:

Սարգիս Հասան-Զալալեանին կեանքի մայրամուտին նոր փորձութիւններ էին սպասում: 1826թ. յուլիսին պարսկական մեծաքանակ զօրքերը, գահաժառանգ Աբբաս-Միրզայի գլխաւորութեամբ, ներխուժում են Արցախ եւ պաշարում Շուշի բերդաքաղաքը: Շուշիի ոռուսական կայազօրը, գնդապետ ի. Ռենտարի հրա-

⁵⁵ ԾԱՀՆԱԹՈՒԽԵԱՆՑ Յ., նշ. աշխ., հ. Բ, էջ 348-349.

⁵⁶ ԵՐԻՑԵԱՆ Ա.Լ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք ժթ. դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 251:

⁵⁷ ՄԿՐՑՈՒՄԵԱՆ Լ., Աղուանից (Գանձասարի) կաթողիկոսութիւնը ԺԷ-ԺԹ. դդ., Երեւան, 2006, էջ 194:

⁵⁸ ԵՐԻՑԵԱՆ Ա.Լ., նշ. աշխ., հ. Ա, էջ 251-252:

մանատարութեամբ, եւ տեղի հայ բնակիչները հերոսական դիմագրութիւն են ցոյց տալիս ահեղ թշնամուն։ Ականատես պատմագիր Միրզա Եռևառով Ներսէսովն այդ մասին գրում է. «Քաղաքի հայ բնակիչները ամէն հարցում ոռութերի հետ միասնաբար գործելով՝ ճիգ ու ջանձ չէին խնայում երանց նոլիրուած կերպով ծառայելիս... Այն աստիճան, որ որոշ ժամանակ անց հայերի վրայ բարկացած Արքաս-Միրզան հրամայում է, որ ով որ հայի գլուխ բերի, 10 աշրափի կը ստանայ: Այդ պատճառով հայերից շատերն են սպանում»⁵⁹: Արցախահայութեան համար օրհասական այդ օրերին Արքաս-Միրզայի բարկութիւնը ամոքելու նպատակով նրան են ներկայանում Սարգիս մետրոպոլիտը, Զրաբերդ գաւառի տիրակալ Մելիք-Վանի Աթաբեկանը եւ Գիւլիստան գաւառի տիրակալ Մելիք-Յովսէփի Բ. Մելիք-Բեգլարեանը: Արցախի երեւելիներին յաջողուում է մեղմել Արքաս-Միրզայի բարկութիւնը:

Սակայն, երբ Շամիսորի եւ Գանձակի ճակատամարտերում ջախջախուած Արքաս-Միրզայի բանակը չպրոտւում է Արաքսից այն կողմ, Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովի հրամանով հայ երեւելիները Ռուսաց կայսրութեան նկատմամբ անհաւատարմութեան մեղադրանքով ձերբակալուում են: Մելիքներն ուղարկուում են Բաքու, իսկ Սարգիս մետրոպոլիտը՝ Թիֆլիս, Ներսէս Աշտարակեցու մօտ, որպէսզի վերջինս քննութեամբ պարզի իրականութիւնը: Ա. Երմոլովի՝ 1826թ. դեկտեմբերի 2-ին Ներսէս Աշտարակեցուն հասցէագրուած նամակուում այդ մասին կարդում ենք. «Ես հրամայեցի ուղարկել նորան Թիֆլիսի իբրեւ մի մարդու, որ արժանի է խիստ պատժի: Այդ պատիժը կը սպասեմ ես ձերդ սրբազնութեան խստապահանջութիւնից, վասն զի դուք էք Հայոց ազգի հաւատարմական զգացմանց պահպանը»⁶⁰: Մատենադարանի Հազարեանների արխիւում մենք յայտ-

⁵⁹ Միրզա. ԵՌԻՍՈՒԹ ՆԵՐՍԷՍՈՎ, Ճշմարտացի պատմութիւն, էջ 123-124:

⁶⁰ Акты Кавказской Археографической Комиссии, т. VI, ч. I, Тифлис, 1874, с. 464. Այդ նամակի հայերէն թարգմանութիւնը տե՛ս ԵՐԻՑԵԱՆ Ա. և աշխ., հ. Ա, էջ 253: Նշելի է, որ թէեւ այս վաւերագրի կապակցութեամբ Բ. Ուղուարեանը գրում է. «Երիշեանը չի նշում, թէ որտեղ է պահուում նամակը» (տե՛ս ՈՒՂՈՒԻԲԵԱՆ Բ., Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակոյրը, Երեւան, 1998, էջ 253, ծնթ. 1), սակայն մեզ յաջուել է պարզել, որ այն այժմ պահուում է Մատենադարանի Հազարեանների արխիւում.-թղթ. 106, գ. 51, վաւ. 112:

նաբերել ենք նաեւ Ա. Երմոլովի հրամանով Սարգիս մետրոպոլիտին Թիֆլիս ուղարկած գեներալ Վ. Մադաթովի՝ 1826թ. դեկտեմբերի 12-ին ներսէս Աշտարակեցուն ուղղուած նամակի պատճէնը, որտեղ մասնաւորապէս կարդում ենք. «Կատարելով այս տեղի երկրամասի կառավարչապէտ պ. հետեւազօրի գեներալ եւ կաւալեր Երմոլովի կամքը, պատիւ ունեմ Ձերդ Սրբազնութեան մօտ ուղարկելու Սարգիս արքեպիսկոպոսին: Նրա արարքների մասին, որոնց համար նա ուղարկում է Ձեր մօտ, պ. կառավարչապէտը իր վրայ վերցրեց տեղեկացնել Ձերդ Սրբազնութեանը: Իսկ ես իմ պարտքն ևս համարում հաղորդել, որ նրա վարմութեք այնքան անթոյատրելի էր, որ նորին Գերազանցութիւնը հրամայեց ինձ ուղարկման ժամանակ նրա նկատմամբ ունենալ խիստ հսկողութիւն, պահպանելով, սակայն, ողջ անհրաժեշտ յարգանքը նրա բարձր աստիճանի նկատմամբ, ինչը եւ իմ կողմից կատարուել է նշգրտորեն»⁶¹: Այս նամակին կից բերուած է նաեւ գնդապետ ի. Ռենտի 1826թ. դեկտեմբերի 27-ի հրամանը՝ Սարգիս արքեպիսկոպոսին Թիֆլիս ուղարկելու կապակցութեամբ ճանապարհին նրա վրայ սահմանուելիք հսկողութեան կարգի մասին⁶²:

Սակայն, քննութիւնը լիովին ապացուցում է հայ երեւելիների անմեղութիւնը, եւ նրանք, Սիրիր աքսորուելու փոխարէն, վերադառնում են հայրենիք: Այդ առումով խիստ ուշագրաւ է Մատենադարանում պահուող մէկ այլ փաստաթուղթ, որտեղ հաշտութ Հազարեանի հարցմանն՝ ի պատասխան ներսէս Աշտարակեցին հանգամանօրէն նրան է ներկայացնում արցախցի երեւելիների ձերբակալութեան հետ կապուած երմոլովին բանարկութիւնները եւ բացայատում մեղադրանքների անհիմն լինելը: Վաւերագրում կարդում ենք. «Գրութիւնն վասն Սարգիս արքեպիսկոպոսին սուտ են բոլորովիմք եւ անհիմն ըստ ամենայնի վասն խաչին եւ աւետարանին, եւ յորդորելոյ գժողովուրդն հայոց յանհաւատարմութիւն իւրոյ կ. Մեծութեանն, եւ են այնոքիկ պատրանք ստարանից, որով նորին բարձր գերազան-

⁶¹ Մատենադարան, Հազարեանների արխիւ, թղթ. 106, գ. 51, գաւ. 113, կամ ՄԱՀԱԼԵԱՆ Ա., Փաստարդեր Արցախի գործիչների եւ Արքա-Սիրացայի 1826 թ. հանդիպման հետեւամեների վերաբերեալ, «Բանբեր Հայաստանի արխիւների», 2006, թիւ 1, էջ 11:

⁶² Նոյն տեղում, թղթ. 106, գ. 51, գաւ. 114:

⁶³ Մատենադարան, Ալ. Երիցեանի արխիւ, թղթ. 156, գաւ. 50:

ցութիւնն Ալեքսէյ Պետրովիչ Երմոլովն ըստ հասարակ սովորութեան իւրում պատրեալ այնպէս, նախ գրեալ էր առ իս, եւ հրամայեալ էր Կառավարութեան Ղարաբաղու յդել զնա առ իս վասն դատապարտութեան»⁶⁴:

Բնականաբար, այս ամէնը չէր կարող անհետեւանք մնալ:

«Ծերունի Սարգիս միտրօպօլիտի վրայ այդ բոլորը այն աստիճան քարոյապէս ազդեց, որ գնալով Գանձասար, նա անկողին մտաւ եւ յետագայ 1828 թուին վախճանուեց»⁶⁵: Բաղդասար եւսո. Հասան-Զալալեանի՝ Եփրեմ կաթողիկոսին ուղղուած 1829թ. փետրուարի 15-ի նամակում գտնում ենք նաեւ Սարգիս Հասան-Զալալեանի մահուան օրը. «Սրբազն Մետրապօլիտ Հայրն մեր՝ ի դեկտ. ամսեան ի 19-ին փոխեցաւ առ Աստուած, եւ եքող զմիաբանութիւնն եւ զվանս մեր որբացեալ ի թշուառագոյն վիճակի սգոյ եւ տրտմութեան»⁶⁶: Նրա մահով փակուեց Գանձասարի կաթողիկոսութեան պատմութեան վերջին էջը:

Այժմ, օգտուելով Բաղդասար մետրոպօլիտի տոհմացանկից, տեսնենք թէ ինչ եղան Յովհաննէս եւ Սարգիս Հասան-Զալալեանների միւս եղբայրները եւ ինչ ժառանգներ թողեցին նրանք: Եթէ այդ ազգաբանութիւնը, ինչպէս տեսանք վերեւում, Բաղդասար մետրոպօլիտի նախնիների մասով առանձին դէպքերում կարեք ունէր որոշ սրբագրումների, ապա նրա հօրեղբայրների եւ հօրեղբօրորդիների մասով լիովին վստահելի է: Ներկայացնենք տոհմացանկի այդ հատուածը.

«Ա. Գարրիկի-բէկն ծնանի գերեմիա եպիսկոպոս եւ գԳրիգոր-բէկ: Գրիգոր-բէկն ծնանի գԶալալ-բէկ Ե եւ գդուատր Խորիշահ: Զալալ-բէկ Ե ծնանի գՍարգիս-բէկ եւ գՄինա-խաթուն դուստրն:

Բ. Միսայէլ-բէկն ծնանի գԱպրես-բէկ եւ գԱւլան-բէկ: Ապրես-բէկն ծնանի գԱ-քարեկ Գ, գԳրիգոր-բէկ եւ գԶաւատ-բէկ: Ա-քարեկն ծնանի գՄովսէս եւ զայլս: Գրիգոր-բէկն ծնանի գԻվանէ եւ զայլս:

⁶⁴ Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիւ, թղթ. 166, վաւ. 768.

⁶⁵ Երիթեան Ա.Լ., նշ. աշխ., 4. Ա, էջ 256:

⁶⁶ Մատենադարան, Կաթողիկոսական գիւտան, թղթ. 62, վաւ. 19, բնագիր, կամ Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, գիւրք Թ, Հայ Առաքելական Եկեղեցու Արքացի թեմը (1813-1933), Երեւան, 2001, էջ 56-57: Վաւերագրի վրայ կայ նշում. «Ի Գանձասարու ի Պաղտասար եպիսկոպոսէ առ Կաք. ի 19 մարտի ստացայ 1829 ամի»:

Դ. Զալալի-բէկն ծնանի զԱրքարակ, զԱռատամ-բէկ եւ զԽորհշահ դուստր: Առատամ-բէկն ծնանի զԵսայի եւ զայլս, որք գտանին ի Բոլնիս:

Ե. Ալլահովոլի-բէկն ծնանի զԱռուշան-բէկ եւ զՋհանգիր-բէկ: Առուշան-բէկն ծնանի զԵրիս որդիս, որք գտանին ի Բոլնիս»:

Եւ, վերջապէս, «Դանիէլ-բէկն ծնանի զԲաղդասար միտրոպոլիտ եւ զՄէկի Ալլահիկերդին Բ Խաչենոյ գաւառին»⁶⁷: Նրա կնոջ անունը Հռիփսիմէ էր:

Զալալ-բէկը եւ Բաղդասար մետրոպոլիտի հայր Դանիէլ-բէկ-էր 1791թ. սպանուել էին իբրահիմ խանի կողմից: Ինչպէս երեւում է տոհմացանկից՝ Զալալ-բէկի եւ նրանց միւս եղբայր Ալլահօռուլի-բէկի ժառանգների մի մասը 1797-1798թթ. արցախահայութեան գաղթից յետոյ մշտական բնակութիւն էին հաստատել Բոլնիսում:

Բերուած տոհմացանկում չկան տուեալներ միայն Խորայէլ-բէկի ժառանգների մասին, որոնց համար էլ ըստ երեւոյթին, նախատեսուած է եղել ցուցակում բացակայող «Գ» թուահամարը: Սակայն, Բաղդասար մետրոպոլիտի տոհմացանկի արխիւսային տարբերակում Խորայէլ-բէկի ժառանգների մասին կայ մի փոքրիկ ծանօթութիւն. «Հանգուցեալ Խորայէլն ունի կենդանի արու ժառանգս 2. մին աշխարհական է ի Մօգդօֆ»⁶⁸: Կից բերուած տոհմաշղթայում գտնում ենք նաեւ նրանց անունները՝ Յովսէփ վրդ. եւ Գէորգ-բէկ, ընդ որում, վերջինս ունեցել է հվանէ անունով որդիի⁶⁹: Գանձասարի վանքի հիւսիսային պատի տակ գտնուող մի տապանաքարի արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ.

«Այս է տապան Յոսէփի վարդապետին,
որ է յազգէն Զալալ Մեծ իշխանին,
որդի Խորայէլ-բէկին, թ-վ. ՌՅԺԲ (1863),
դան Արցախական աշխարհին»⁷⁰:

Բնականաբար, Խորայէլ-բէկի Մոզդոկում բնակուող աշխարհական որդին էլ Գէորգ-բէկն էր:

⁶⁷ ԲԱՖՖԻ, Երկնրի ժողովածու, հ. 12, էջ 125-126:

⁶⁸ ՀԱԱ, ֆ. 57, գ. 3, գ. 9, թ. 18:

⁶⁹ Նոյն տեղում, թ. 22:

⁷⁰ ԲԱՐԽՈՒՏԱՄԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, էջ 253, Դիւան, V, Արցախ, էջ 69:

Ինչպէս երեւում է վերոբերեալ տոհմացանկից, Մելիք-բէկի
որդիները թողել են բազմաթիւ ժառանգներ, սակայն նրա թոռ-
ներից առաւել նշանաւորները Դանիէլ-բէկ իւղբաշու որդիներն
էին Բաղդասար մետրոպոլիտը եւ Մելիք-Ալլահվերդի Բ-ը: Վեր-
ջինիս «յետին Գեորգի արքայն վրաց, ի 1800 ամին Քրիստոսի
հրովարտակալ իւրով շնորհեաց սեփականուրեամբ 69 գեր-
դաստան Խաչէնցիք, գաղթելոցն ի ճահանգին Վրացտանու-
նու վերաբնակելոցն ի Սօմինք գաւառին ի Պոլնիս գիւլն»⁷¹:
Յետագայում այդ գերդաստանների թիւն աւելացել է Արցախից
Վրաստան գաղթած եւ այդ թոհուրեոհի մէջ Գիւլիստանի Մելիք-
Արով Մելիք-Բեգլարեանի իշխանութեան տակ յայտնուած խա-
չենցիների հաշուկն: Մատենադարանում պահում է Մելիք-Արո-
վի՝ 1802թ. սեպտեմբերի 26-ին դրած ծանուցագիրը, որով նա
եր իշխանութեան տակ յայտնուած խաչենցիների նկատմամբ
աւատական իրաւունքները յանձնում է Սարգիս Հասան-Զալա-
լեանին: Ծանուցագրում կարդում ենք. «Ինձ՝ Մելիք Արօվիս
մօտն Ղարաբաղու քերած կամ Երեվանու քերած մին փարայ
տուն կար, որ մինչի այսօր տէրութիւն էի անում: Բայց սրբա-
զան Սարգիս վարդապետն դուս ելաւ, թէ Խաչանու ըռաեաբն
իմն է եւ մենք ել առաջնոց յատկապէս տեղեակ ենք, որ այս
Սարգիս վարդապետիս հայրն կամ ազգն Խաչանու մհալին մե-
լիքութիւն արած են այս սապարօվս (պատճառով-Ա. Մ.):»:

Զի ահայ թարիղումս գերազանցագունեղ Պէտք իվանիչ կաւալցգուն մարիփաք-օվն եւ մեր մեծ եղբայր իշխան Մէլիք Զիմշիտին մարիփաք-օվն վեր առինք, որչափ որ Խաչանեցի իմ մօտս տուն կար դպի Սարգիս վարդապետին իմ կամաւ եւ յօժարութեամբ, որ զայս վերոյ գրեալ տաներիս տէրութիւն անէ, ելի այսուհետեւ իմ բան չի լինի»⁷²: Հէնց այս խաչենցիներն էլ Սարգիս արքեպիսկոպոսի յորդորներով որպէս իրենց մելիք ընտրել են Ալլահվերդուն: Այդ մասին ուշադրաւ տեղեկութիւններ կան գեներալ Պ. Ցիցիանովի՝ Վրաստանի հայոց թեմի առաջկան գեներալ Պ. Ցիցիանովի՝ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Յովհաննէս Գեղարդակրին ուղղուած 1805 թ. մարտի 2-ի նամակում, որտեղ կարդում ենք. «Ղարաբաղցին Խաչենցիք նամակում,

⁷¹ *III*, §. 57, n. 3, n. 9, n. 18.

72 Համար, վ. 37, ց. 3, գ. 2, թ. 10:
 Մատենադարան, Կաթողիկոսական գիւղան, թղթ. 240, վաւ. 42, պատճենը
 տե՛ս նոյն տեղում, վաւ. 148, նաեւ՝ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ 1., նշ. աշխ., էջ 239:
 ՄԵԼԻՔ-ԶՈՎՃՉՈՎԵՐ, որպէս վկայ, վաւերագրի վրայ թողել է իր կնիքն ու
 սարքագրութիւնը. «ՄԵԼԻՔ Զիմշիդ ՄԵԼԻՔ Շահնազարեան ա ևս գիրել՝
 գիրիս վրկայ էմ»:

Մելիք-Արովի 1802 թ. ծանուցագիրը իր իշխանութեան տակ
լայնուած խաչեցիների նկատմամբ աւատական իրաւունքները

Սարգիս Հասան-Զալյալեանին յանձնելու մասին
(Մատենադարան, Կաթողիկոսական դիման, թ.թ. 240, վա. 42)

հայբն տուին ինձ արգայ եւ գանգատ են անում, որ երբ նոքա Ղարաբաղէմէն եկան Վրացտանումն, յայնժամ ցան եւ ցիր էին Վրացտանումն այլ եւ այլ տեղերումն. յետոյ հաւաքուն են մինչեւ 80 տունն նոքա, յայնժամ Սարգիս արքիերն կոչեաց զնոսա առ ինքն եւ ասաց նոցա, թէ որովհետեւ ի մէջ նոցա սովորութիւն կայ մէլիքի ընտրելոյ, վասն այսորիկ շարժէր զնոսա ի կիրս, որ ընտրեսցեն յիշեալ հայբն զեղբայրն նորա զԱլավերդը եւ խոստացեալ է նոցա տալ վասն այնորիկ զիս, եզինս եւ երկու հարիւր քուման փող»⁷³: Թող մեզ չփոթեցնի այն հանգամանքը, որ նամակում գեն. Յիշիանովը Մելիք-Ալլահ-վերդուն ներկայացնում է որպէս Սարգիս արքեպիսկոպոսի եղբայր: Բաղդասար մետրոպոլիտի տոհմացանկով տեսանք արդէն, որ Սարգիս արքեպիսկոպոսը Ալլահվերդի անունով եղբայր չի ունեցել եւ մելիք ընտրուողը նրա եղբայր Դանիէլ-բէկի որդին էր եւ հէնց Բաղդասարի եղբայրը: Այս հարցում, բնականաբար, Բաղդասար մետրոպոլիտը երբեք չէր չփոթուի:

Այս փաստաթղթերը գալիս են ապացուցելու, որ Արցախից Վրաստան գաղթած խաչենցիները, ի դէմս Մելիք-Ալլահվերդու, այնտեղ ունեցել են իրենց մելիքը:

Մելիք-Ալլահվերդին վախճանուել է 1827թ., թողնելով չորս որդի՝ Երեմիա քահանայ, Մովսէս վարդապետ, Աբրահամ-բէկ եւ Յովսէֆ-բէկ: Մելիք-Ալլահվերդու մահով Հասան-Զալալեան տոհմի մելիքութիւնը աւարտուեց: Մովսէս վարդապետը վախճանուել է 1849թ., ինչպէս վկայում է Գանձասարի վանքի հիւսիսային պատի տակ գտնուող նրա տապանաքարի արձանագրութիւնը.

«Այս է տապան Մոսէս խաչակիր վարդապետին,
որ է ազգէն Զալալ Դօլին,
որ է որդի Մելիք Ալավերտին,
եւ եղբար էր խաչակիր Երեմիա բահանային.
1849 թվ.»⁷⁴:

⁷³ Մատենադարան, Կաթողիկոսական գիււն, թղթ. 16, վաւ. 41, Ալ. Երիցեանի արխիւ, թղթ. 156, վաւ. 350^թ, նաեւ՝ ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի արխիւ, Լեռոյի Փոնդ, ց. 1, գ. 2:

⁷⁴ ԲԱՐԵՒՄԱՆՑԱՐԵԱՆՑ Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 253, Դիւան, V, Արցախ, էջ 69:

184

Присягній друкарій Аракчеєвскому
Іоаннов.

Ми, шестидесятъ восьмого года!

Скварцієві Арианікъ Сасинській 1745, XII
нечікъ волю прощенію єпископомъ, що не-
рекламує цю від братія життєсвітськихъ чи-
зажиттєвихъ розмежъ, чи таємъ, а такожъ до вѣ-
кової іодроти окото восьми десяти членій
Баптистівъ, 1750. Аристіеръ Гарківъ призначивъ къ
кѣ сего іодроти поганість поганість къ кѣ іодроти
сего вібічніхъ братія віо міністерствіе ѿ від-
шлюблівнѣхъ земельъ чи відомої, таїдіїї болю въ
дніїхъ таїсся за роботої, денонощі, що вони поганість,
но ѿнъ чистотою новогодніхъ обіещаній не
приговляєть сие богоугодністю, а іодроти же
поганість къ не відомої відомості відоми, чи
згадується відомою. — Свадебніе осені ві-
шеньї Пресвятої Єноти, Кандидати чи
Мейні парода віло и отідаючиши, якже ві-
димъ відъ Покорнійшіхъ пропозицій відоми пособістю
зупини чи то поганість чи то симо чи то
членій зупини, а надіючиши відъ поспільство

իշխան Պ. Ցիցինովի նամակը Յովիաննես Գևորգակրին

(ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի արխիվ, Լէօի ֆոնդ, գ. 1, գ. 2)

իսկ Գանիկէլքէկի միւս որդին՝ Բաղդասար մետրոպոլիտը ծնուել է 1775թ. յունուարի 12-ին, Գանձասար գիւղում: Մէկը տութիւնն ու կրթութիւնը ստացել է Գանձասարի վանքում: 1796թ. Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցում Գանձասարի Մարգիս կաթողիկոսից ստացել է սարկաւագութեան աստիճան, իսկ 1798-ին՝ նոյն եկեղեցում ձեռնազրուել վարդապետ: Մէր նպատակների մէջ չի մտնում այս հայրենանուէլ հոգեւորականի գործունէութիւնը ներկայացնելը, մանաւանդ որ ժամանակին նրա մասին ուշադրաւ յօդուած է հրապարակել Մուրացանը (Գրիգոր Տէր-Յովհաննիսեանց)⁷⁵: Այստեղ միայն արխիւսային նիւթերի օգնութեամբ կը ներկայացնենք նրա գործունէութեան որոշ դրուագներ:

Սարգիս մետրոպոլիտի մահից յետոյ 1828թ. դեկտեմբերի 25-ին Շուշիում գրուած Համախօսականով Արքախի երեւելիները խնդրել են Եփրեմ կաթողիկոսից Հանգուցեալ Սարգիս արք-պիսկոպոսի փոխարէն մետրոպոլիտ Կարգել Բաղդասար Եպիսկո-պոսին: «Վստահանամք ամենախոնարհարար խնդրել ի Վեհա-վկան Տերութենէ ձերմէ,-կարդում ենք Համախօսականում,-այսու նորոգ մահարազգրութեամբ մերով, զինհեմազարդ եւ յիրաւի արժանին պատույ Մետրապօլտութեան երկրիս մերոյ՝ զՊատ-դասար յարգոյ Եպիսկոպոսն՝ կարգել ի տեղի վերափոխեալ Սրբազն արքեպիսկոպոսին Սարգսի Հասան-Զալալեանի իբ-րեւ զորդի փոխանակ հօր»⁷⁶: 1830թ. Եփրեմ կաթողիկոսը նրան նշանակել է Արքախի մետրոպոլիտ:

⁷⁵ ՏէՐ-ԹՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ Գ., Բաղտասար մետրապօլիտ Հասան-Ձալակեան-
ց, 1880, թիւ 5, էջ 131-164.

րինի ցանքս կատարելը, խստօրէն պատուիրելով, որ «էլի այսուհետեւ անկարգ բան չի առնեն, ով որ վանքին մուլքումն կամենա վար անել սրբազն Պաղտասար արքեպիսկոպոսին հրամանաւն եւ գիտութեամբն լինցիցի վարն նոցին՝ եւ նշմարտութեամբ նորա բարին տան»⁷⁷: Իսկ Արցախի նոր պարէտ մայոր Բարաթովը 1834թ. օգոստոսի 30-ի գրութեամբ նայիր Ռուստամ-բէկին կարգադրել է հեռացնել Գանձասարի վանքապատկան հողերի վրայ բնակութիւն հաստատած քոչուորներին. «Սրբազն Բաղդասար մետրապօլիտն ինձ գիր գիրենով յայդնում է, թէ Քոյանի մհալէն Քոյանի Քարամլու քայլիցն իննոց տուն վանքին թալիդ կուզլակ տափումն ձմեռն կենում էն եւ Տեառն մետրապօլիտն էս բանիս ըուազի չէ, վասն որոյ ձեզ հրամայեմ էս թալդաս հասեալ սհարին էն տներն մի ըստ միջոցէ քօչացնեմ եւ իւրեանց էլիկին (ազգին-Ա.Մ.) մեջն յդէք եւ դատ-դատ անէք, որ ոչ չի կարողանան վանքի թալիդ տափերումն վէր կան»⁷⁸: Կարծում ենք, պարզ է, թե ինչ կարող էր լինել, եթէ ժամանակին անկոչ վրանաբնակները հեռացուէին այդ հողատարածութիւններից: 20-րդ դարը մէջ օրինակների պակաս չի թողնում:

Բաղդասար մետրոպոլիտի միւս յիշարժան ծառայութիւնն էր «Խօրպավանից մեծամեծ եւ ընդարձակ կալուածներն ու յափշտակուած սեփիհականութիւններն ազատելը Մեհտի-Գուլի խանի դստեր եւ ուրիշ պարսիկ թէգէրու ձեռքից»⁷⁹:

1836թ., երբ հաստատուել են կոնսիստորիաները, Ցովհանն նէս Կարբեցի կաթողիկոսը նրան նշանակել է Արցախի թէմի առաջնորդ, իսկ 1837թ. որպէս առաջնորդ հաստատուել է Շուշիում եւ շարունակել իր հայրենանուէր գործունէութիւնը: Անուրանալի են նրա ծառայութիւնները նաեւ գպրոցաշինութեան եւ գրատպութեան⁸⁰ ասպարէզներում:

⁷⁷ Մատենադարան, Յ. Արրահամեանի արխիւ, Էղթ. 98, վաւ. 117, պատճէն:

⁷⁸ Նոյն տեղում, թղթ. 98, վաւ. 121, պատճէն:

⁷⁹ Տէր-Յովհաննի արխիւ, «Փորձ», 1880, թիւ 5, էջ 159:

⁸⁰ Բ. Հասան-Ջալալեանի հրատարակչական գործունէութեան մասին տե՛ս Ա.Ի.Վ.Գևան Ս., Նիւթեր Ղարաբաղի նախատվետական շրջանի մամուլի պատմութիւնցից, Երեւան, 1969, էջ 16-19, նոյնի՝ Ղարաբաղի մամուլի պատմութիւն, Երեւան, 1989, էջ 29-35, նոյնի՝ Արցախը հայ մշակոյթի կարեւորագոյն օջախ, Երեւան, 1991, էջ 102-106: Նրա հրատարակած գրքերից նշենք

Բաղդասար Հասան-Ջալալեանի բեղմնաւոր գործունէութիւնն ի նկատի ունենալով Լազարեան եղբայրները նրան ընտրել են Լազարեան ճեմարանի խորհրդի անդամ։ Այդ մասին տեղեկանում ենք Լազարեան եղբայրների՝ 1843թ. ապրիլի 6-ի նրան հասցէազրուած նամակից։ «Խորհրդակցեալ դր. ընդ առաջին անդամայ եւ կառավարչի կարգաց նեմարանիս Պայծառափայլ Գրաֆ Պէնինտոռֆի, կարգեալ եմ ի յաւետ լուսաւորութիւն նորին կարգաց գրազում անդամս յերեւելի արժանանձնութեանց ազգի մերոյ, արդ՝ նորին խորհրդով կամեցեալ մեր պարաւանդեալ եմ նաև գոմանս ի նախամեծար սրբազնութեանց ազգի մերոյ, ընդ այնմ եւ Բարձր սրբազնութիւն ձեր, որովհետեւ մեծարելի էք ի շարս նոցունց եւ իսկ ազգային վիճակաւոր բազմաթիւ հայկազնեից այնոցիկ կողմանց եւ մետրապօլիտ»⁸¹։


Բաղդասար մետրոպոլիտը ծաւալել է նաեւ նշանակալից շինարարական-վերանորոգչական գործունէութիւն։ Պահպանուել է նրա՝ 1850թ. մայիսի 27-ի գիմումն ուղղուած արցախահայութեանը, որով նիւթական օժանդակութիւն է խնդրել Գանձասարի տանիքը եւ Ամարասի վանքը վերանորոգելու համար։ «Հոգֆ իմ եւ մտածմունք, յաւուրս ծերութեան իմոյ եւ հիւանդութեանս, այն է առաւելապես՝ կարդում ենք նամակում, զի տանիք սրբուածարի վանիցն Գանձասարայ եւ վանքն Ամարասայ վերանորոգեցին՝ ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ անուան օրինակ ազգի Հայոց, հարազատ որդուոցդ սրբոց ազգային վանօրէից եւ եկեղեցւոյ»⁸²։ Միայն Գանձասարի վանքի տանիքի վերանորոգման համար Բաղդասար մետրոպոլիտի անձնական միվելքանորոգման համար 81 Մատենադարան, Լազարեանների արխիւ, թղթ. 125, գ. 30, վաւ. 68;

Բաղդասար Հասան-Ջալալեանը վախճանուել է 1854թ. յունիսի 27-ին եւ թաղուել Գանձասարի վանքի գաւթում, իր հօգութիւնների՝ Յովհաննէս Սարգսի կաթողիկոսների կողքին։


81 Միայն ԵՍՍՅԻ ՀԱՍՏԱՆ-ՁԱՎԱԼԱՎԱՆԻ «Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարիին Աղուանից» մատենագրական երկը (Շուշից, 1839)։

82 Մատենադարան, Լազարեանների արխիւ, թղթ. 125, գ. 30, վաւ. 68;

82 ՀԱԱ, ֆ. 332, գ. 1, գ. 590, թ. 2:



Գանձասարի Երեմիա և Եսայի կաքողիկոսների
տապանաքարերը



Բաղդասար, Յովհաննես և Սարգիս Հասան-Զալալեանների
տապանաքարերը

Հասան-Ջալալեան տոհմի բազմադարեան ընթացքի լաւագոյն վկայութիւնը կարող է լինել Բաղդասար մետրոպոլիտի տոհմացանկի արխիւային տարբերակի վերջարանը, որով էլ ցանկանում ենք եզրափակել սոյն յօդուածը. «Այլեւ թէ ի հին պարսից արքայից եւ թէ նոցին յաջորդաց արքայիցն պարսից բաց ի յերկոտասան շնորհեցեալ ֆէրմանաց, ազգին Հասան Ջալալեանց, Հասան Ջալալեանցն եւս ունեն ստացեալ հրովարտակ 2-[րդ] Հերակլ արքայէն վրաց, եւ Անտոն պատրիարքէն վրաց, եւ յետին (իմա՝ վերջին - Ա. Մ.) Գեօրգի արքայէն վրաց, եւ յայսկոյս Կովկասու տիրապետող բէզլարբէզի հին եւ նոր խանաց եւ խաներաց, մինչեւ հասն թափիայս վասն հեռութեան, հաստատութեան, պատոյ եւ արժանաւորութեանն յազգականացն Հասան Ջալալեանց, թէ ի հոգեւորականաց եւ թէ յաշխարհականացն նոցին, սկսեալ ի 1438 ամէն Քրիստոսի, մինչեւ ի 1844 ամն Քրիստոսի, եւ ի 866 (1461/1462) քուականէն մահմեդականաց⁸³: մինչեւ ի 1261 (1845) թիւն մահմեդականաց»⁸⁴:

Այս տողերը լինքնին մի պերճախօս վկայութիւն են Հայոց Արեւելից կողմանց կեանքում Հասան-Ջալալեանների ունեցած մեծ դերակատարութեան:

ԱՐՑԱԿ ՄԱՂԱԼԵԱՆ

⁸³ Խոսքը Կարա-կոյունլու Սուլթան Զհանշահի կող՝ Բեգում-խալթունի 866 հ.թ. զիկագագա ամսի 10-ի (1462թ. օգոստոսի 6) հրովարտակի մասին է՝ թանձասարի Յովհաննէս կաթողիկոսին, որով հաստատում է նրա արուած Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսին, որով Հաստատում է նրա արուած Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսական իրաւունքները (տե՛ս Մատենադարանի պարսկերէն վաւեկաթողիկոսական իրաւունքները (տե՛ս Մատենադարանի պարսկերէն վաւեկաթողիկոսական իրաւունքները, պլակ I, կազմեց Յ. Փափագեանը, Երեւան, 1956, բազրելը. Հրովարտակներ, պլակ I, կազմեց Յ. Փափագեանը, Երեւան, 1956, էջ 45-47): Ուռեւելին պատճէնը տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական

դիւան, թղթ. 241, վա. 197:

⁸⁴ ՀԱԱ, թ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

Макаровский магнум
Примечание
Февраль 1899 года в 1899 году

Chart of upper Mississippi River

Учебник I 854 листа из 2000 листов
Учебник изучает основы математики.

Feb 1977 May - 1977

Weymaw Migratory Bird Survey, 1910

Gebetz II Seite 8

We are your people 1 Peter 2:10-11

Jaffa 1877 Jaffa II Jaffa III Jaffa IV
261

Aug 17

Uraeotyphlus ¹ *gigas* *sp. specif.*

Supplementary II

March 1131
Starting from Hattie's 2000 ft.

Young III William Webster Lee
Younger George George Webster Lee

Wissenschaften und Künste der Freien Universität Berlin

W. P. M. 1949 10th for half Marquise, reading
atmosphere
fancying Mar. 28 Marguerite
during II (sample) half

146

Употребляется

Mr. George H.



100 100

Willy Weyer 1935


↳ yesterdays...

Հասան-Զալալեանների տոհմածառի արխիւային օրինակը
(ՀԱԱ, ֆ. 57, գ. 3, գ. 9)

ԽԱԶԵՆ ԳԱԻԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՀԱՍՍԱՆ



ԶԱԼԱԼԵԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԸ ԺԵ-ԺԹ. ԴԱՐԵՐՈՒՄ*



The family trees of the noble-Melik's of Artsakh (Materials about the Armenian Melikdoms)

(summary)

ARTAK MAGHALYAN

Between the Khachenaget and Karkar rivers spread the Khachen district. The local Hasan-Jalalyan family of the meliks descended from the oldest princely Aranshahik stock. The founder of the Hasan-Jalalyan family was Hasan-Jalal Dola (?-1261)-the heir of the Aranshahiks' principality of Inner Khachen. The Hasan-Jalalyans' residential castles were Tarkhanaberd and Kachaghakaberd. From the end of the 14th c. the members of this family followed also on the patriarchal throne of Gandzasar by the right of hereditary succession. Thus, Gandzasar became the spiritual and political centre of the Artsakh melikdoms.

In this article we present the genealogy and the family tree of the Hasan-Jalalyans in the 17th – 19th centuries on the bases of the manuscripts, archive materials and lapidary inscriptions.

We have spoken also about the Meliks of Khachen and patriarchs of Gandzasar, who had a great role during the Armenian national-liberation movement in 18th c.